

պէս ասէ Խորենացին . « Ըստ արժանի անօրէն իւրոյ խորհրդոյ զյաւիտենական գեհեհինն աստէն բերելով զօրինակ , հրկէզ եղեալ յԱդրիանուպօլիս սատակեցաւ » (378) :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Ժողով Կոստանդինուպօլսոյ . Յովհաննէս Հայրապետ .

Գէտք Ի ժամանակի նորին :

Ի ԹԱԳԱՒՈՐԵԼ Մեծին Թէոքոսի յարեւելս , դարձան ամենայն Հարք ուղղափառք յիւրաքանչիւր աթոռս , որք արտասահմանեալ էին առ Վաղէսիւ , եւ տուաւ ազատութիւն կրօնի՝ բաց յաղանդաւորաց : Դարձաւ և Ս . Կիւրեղ յերուսաղէմ յաթոռ իւր (379) , եւ եզիտ զհօտ իւր վարատեալ ՚ի դայլոց ասպականչաց . բազումս աշխատ եղեւ ՚ի մաքրել զվիճակ իւր յամենայն վնասակար վարդապետութեանց և յանկարգութեանց . եւ կրեաց այնուհետեւ նորանոր վիշտս , ոչ այնչափ ՚ի չարափառաց , որք նկուն եղեն յերեսաց անուան Թէոքոսի , որչափ յուղղափառաց ՚ի պատճառս Պաւլինոսի Անտիօքացւոյ , որում թեւակից էին արեւմտեայք ընդդէմ Մելիտոսի բարեկամին Կիւրղի . զի նոքա որպէս խորշէին ՚ի Մելիտոսէ , նոյնպէս և ՚ի Կիւրղէ , և արգելուին իսկ զոմանս ՚ի դնալոյ յուխտ յերուսաղէմ : Թէպէտ և միջնորդ հաշտութեան եկաց Ս . Գրիգոր Նիւսացի ՚ի մէջ եպիսկոպոսաց՝ որք ոչն կամէին հաղորդիւ ընդ Կիւրղի իբրեւ ՚ի Կէս Արիոսեանց ձեռնադրելոյ , սակայն եւ այնպէս ոչ կարաց խաղաղել զերկպառակութիւնս նոցա . ապա ողջունեալ զՍ . Կիւրեղ և յայց ելեալ Տնօրինական տեղեաց , դարձաւ ոչ ուրախութեամբ ՚ի տեղի իւր : Եմուտ Թէոքոս Կայսր ՚ի Կոստանդինուպօլիս , (380) . զի յետ մերժելոյ զՍ . Պօղոս յաթոռոյն՝ Արիանոսք նստէին մի ըստ միովէ , և քաղաքն կայսերական լեալ էր մայրաքաղաք Արիանոսութեան : Տիրէր անդէն վարդապետութիւն Արիոսի , առ նմին՝ մուրբութիւն Նովատեանց քարոզէր յայլ և այլ եկեղեցիս քաղաքին . անդ էին և խանձարուրք Մակեդոնեանց , և սյլոյ :